

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԻ ՍԱՐԳՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԿԵՆԴԱՆՈՒՆՆԵՐՈՎ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԵԶԿԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՆԳԼԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ
(ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)**

Ժ.02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Քրիստինե Գևորգի Գրիգորյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ք.գ.դ., պրոֆեսոր Աննա Տարիելի Կնյազյան
ք.գ.թ., դոցենտ Լիլիթ Ասատուրի Բաղայան

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. հոկտեմբերի 26-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. սեպտեմբերի 16-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
ք.գ.դ., պրոֆեսոր՝



Գայանե Հարությունի Մուրադյան

Փոխաբերությունը՝ որպես գիտական հետազոտությունների առարկա, միշտ եղել է հումանիտար գիտությունների ուշադրության կենտրոնում: Սկսած հնագույն ժամանակներից այս երևույթի հետազոտությունները իրականացվել են պոետիկայի, հոետորաբանության, ինչպես նաև ոճաբանության գիտակարգերի շրջանակներում, որտեղ փոխաբերությունը դիտարկվել է որպես լեզվում պատկերներ ստեղծելու միջոց, ոճական հնար և խոսքի հարստացման միջոց: Ժամանակի ընթացքում, ճանաչողական լեզվաբանության լույսի ներքո, փոխվել է փոխաբերության նմանօրինակ ընկալումը: Ներկայումս կարևորվում է փոխաբերության ճանաչողական արժեքը, և փոխաբերությունը դիտարկվում է ոչ միայն որպես լեզվական իրողություն, այլև, նախևառաջ, ճանաչողական գործիք:

Սույն ատենախոսության մեջ փորձ է արվում ուսումնասիրել կենդանուններով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունները անգլաամերիկյան մամուլում, մասնավորապես, քաղաքական և տնտեսական լրագրային հոդվածներում՝ հայ մամուլից ընտրված կենդանուններով փոխաբերական արտահայտությունների հետ զուգադրությամբ: Վերոնշյալ հոդվածների ընտրությունը պայմանավորված է ժամանակակից մամուլում դրանց գերիշխող դիրքով և սերտ փոխկապակցվածությամբ: Ցանկացած պետության տնտեսական համակարգի մակարդակն ու բնույթը մեծապես կանխորոշված են քաղաքական միջավայրով՝ երկրի քաղաքական կառավարման ձևով, քաղաքական իշխանության բնույթով և լեզվատիմության մակարդակով, երկրի քաղաքական համակարգի զարգացման աստիճանով և այլն: Հասարակության քաղաքական և տնտեսական համակարգերի փոխկապակցվածությունը համընդհանուր երևույթ է, որը բնորոշ է բոլոր պետություններին՝ նրանց պատմության բոլոր փուլերում:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ փոխաբերությունները ոչ թե կայուն ու անփոփոխ, այլ մշտապես փոփոխվող ու թարմացվող լեզվական միավորներ են: Ուստի, հաշվի առնելով փոխաբերության հարաշարժ բնույթը՝ այս ուսումնասիրությունները միշտ արդիական են բոլոր ժամանակների համար: Ճանաչողական լեզվաբաններն իրավացիորեն նշում են, որ չկան «մարած» փոխաբերական արտահայտություններ: Այս փոխաբերություններն իրականում մարած չեն, այլ կենդանի են հենց այն իմաստով, որ ղեկավարում են մեր մտածողությունը և գիտակցությունը:

Ատենախոսության **նպատակն** է ուսումնասիրել կենդանուններով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունները անգլաամերիկյան մամուլի քաղաքական և տնտեսական խոսույթներում՝ հայերենի զուգադրությամբ:

Հետազոտության նպատակով պայմանավորված աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. համակողմանի վերլուծության ենթարկել փոխաբերության ըմբռնումները ճանաչողական լեզվաբանության մեջ, վերլուծել տարբեր ճանաչողաբանների կողմից առաջարկվող տեսակետները, փոխաբերության դասակարգումները և սահմանել պատկեր-սխեմաների դերը ճանաչողական փոխաբերության արտապատկերման գործընթացում,
2. հանգամանալից վերլուծության ենթարկել մշակույթի դերը կենդանուններով փոխաբերությունների արտապատկերման գործընթացում,
3. դասակարգել քաղաքական և տնտեսական խոսույթներում օգտագործվող փոխաբերություններն ըստ «կենդանական աշխարհ» աղբյուր տիրույթի՝ վերհանելով նրանց վերծանման յուրահատկությունները, արտապատկերման ճանաչողական բնույթը և պատկերասխեմատիկ կառուցվածքը,
4. վեր հանել անգլամերիկյան լրագրային քաղաքական և տնտեսական խոսույթներում «կենդանի» աղբյուր տիրույթի փոխաբերական արտապատկերման առանձնահատկությունները և վերլուծել փոխաբերությունների դերը քաղաքական և տնտեսական խոսույթներում,
5. համեմատել կենդանուններով փոխաբերական կաղապարների արտապատկերումները և վեր հանել դրանց նմանություններն ու տարբերություններն անգլամերիկյան լրագրային քաղաքական և տնտեսական խոսույթներում՝ զուգադրելով դրանք հայ քաղաքական և տնտեսական խոսույթներում կիրառվող կենդանուններով փոխաբերությունների հետ:

Սույն հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է քաղաքական և տնտեսական խոսույթներում ճանաչողական փոխաբերությունների՝ որպես մի կողմից ճանաչողական գործիքի, մյուս կողմից քաղաքական և տնտեսական մտաշահարկման հզոր միջոցի նկատմամբ օրեցօր աճող հետաքրքրությամբ: Այս նպատակով նրանք հաճախ կիրառում են կենդանուններով փոխաբերություններ: Քաջ գիտակցելով փոխաբերության շահարկային ուժը՝ քաղաքագետներն ու տնտեսագետները, երբեմն քողարկելով իրենց իրական նպատակներն ու ձգտումները, փորձում են փոխաբերության միջոցով ազդել թիրախ լսարանի գիտակցության վրա, փոխել մարդկանց համոզմունքներն ու դիրքորոշումները, երբեմն նույնիսկ դրդել մարդկանց՝ իրականացնել իրենց արժեքային դիրքորոշումներին հակասող քայլեր:

Սույն ատենախոսության **գիտական նորույթը** կենդանուններով փոխաբերական կաղապարների համակողմանի վերլուծությունն է՝ լեզվաճանաչողական հայեցակերպի լույսի ներքո: Վերհանվել են տնտեսաքաղաքական երևույթների առկայացման ճանաչողական կաղապարները և դրանցից բխող հավելյալ արտապատկերումները (entailments): Առաջին անգամ փորձ է արվում ոչ միայն համեմատական զուգահեռներ անցկացնել այս երկու խոսույթների միջև՝ միայն մեկ՝ «կենդանական աշխարհ» աղբյուր տիրույթի դիտանկյունից, այլև վեր հանել քաղաքական և տնտեսական խոսույթը արտացոլող փոխաբերական կաղապարների սեռատեսականիշային հարաբերությունները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ուսումնասիրվող խոսույթներում փոխաբերությունների պատկերասխեմատիկ կառուցվածքի նմանություններին և տարբերություններին: Առաջին անգամ նաև փորձ է արվում զուգադրել կենդանուններով փոխաբերությունների առանձնահատկությունները անգլաամերիկյան և հայ մամուլում:

Ատենախոսության ուսումնասիրության **առարկան** անգլաամերիկյան և հայ քաղաքական և տնտեսական լրագրային խոսույթներում կենդանուններով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկություններն են և դրանց առկայացման կաղապարները:

Լեզվաբանական վերլուծության մեթոդների ընտրությունը բխում է ուսումնասիրվող նյութի բնույթից և հետազոտության նպատակից: Որպես ճանաչողական փոխաբերության վերաբերյալ տարբեր տեսական դրույթների ուսումնասիրության մեթոդ՝ կիրառվել են *լեզվաբանական զենման և նկարագրական վերլուծության մեթոդները*, իսկ քաղաքական և տնտեսական խոսույթներում փոխաբերական ճանաչողական կաղապարների ներկայացման նպատակով՝ *ճանաչողական վերլուծության, խոսութային վերլուծության, համալրեքստային վերլուծության, բաղադրիչային վերլուծության և զուգադրական վերլուծության մեթոդները*:

Հետազոտության իրականացման համար **մեթոդաբանական** առումով հիմնարար նշանակություն են ունեցել ճանաչողական փոխաբերության ոլորտի ուսումնասիրությունները (Ջ. Լեքոֆ, Մ. Ջոնսոն, Ջ. Կովեչես, Ջ. Գրեյդի, Վ. Քրոֆտ, Դ. Քրուզ, Վ. Դեմյանկով, Ե. Կուբրյակովա, Ա. Ջալեվսկայա, Ա. Չուդինով, Ս. Գասպարյան, Ա. Մաթնոսյան և այլք), խոսույթի տեսության ուսումնասիրությունները (Է. Բուդայև, Ա. Չուդինով, Վ. Կարասիկ, Ե. Շեյգալ, Թ. վան Դեյք, Է. Էնկվիստ, Գ. Գասպարյան, Լ. Խաչատրյան, Է. Օրդուխանյան, Լ. Հարությունյան և այլք), ինչպես նաև կենդանուններով փոխաբերություններին նվիրված աշխատությունները (Ա. Դուբեր, Ս. Քելթթ, Ջ. Կովեչես, Ջ. Լեքոֆ, Մ. Ջոնսոն, Մ. Թերներ, Ս. Լեվի-Ստրաուս, Պ. Շեպարդ, Ա. Վիերցբիկա, Ջ. Օրվել, Մ. Սեվիջ և այլք):

Հետազոտության հիմնական **փաստական նյութը** քաղված է բրիտանական, ամերիկյան և հայկական առաջատար լրագրերի, ամսագրերի, շաբաթաթերթերի (The Telegraph, The Financial Times, The Guardian, The New York Times, The Washington Post, The Economist, The Business Insider, The Reuters, The Times, Հրապարակ օրաթերթ, Հայկական ժամանակ, Առավոտ, Իրատես, Հայելի ակումբ, Լրագիր և այլն), առցանց կայքերի քաղաքական և տնտեսական թեմաներին վերաբերող հրապարակումներից (ընդհանուր թվով՝ 4000 առցանց լրագրային հոդված):

Ատենախոսության **տեսական արժեքն** այն է, որ հետազոտության արդյունքները հեռանկարային են լեզվաբանության այն ոլորտների համար, որոնց ուշադրության կենտրոնում են մարդու ճանաչողական գործընթացներին, տարբեր խոսույթներում փոխաբերական կաղապարների ուսումնասիրությանը, փոխաբերությունների պատկերասխեմատիկ կառուցվածքին առնչվող հարցերը: Ձեռք բերված արդյունքները որոշակի ներդրում կարող են ունենալ այս տեսությունների հետագա ընդլայնմանը նպաստելու գործում:

Հետազոտության արդյունքները կարող են **գործնական արժեք** ունենալ ճանաչողական լեզվաբանության, իմաստաբանության, ճանաչողական բառագիտության, ճանաչողական գործաբանության դասընթացներում և սեմինարներում: Ստացված արդյունքները կարող են նաև օգտագործվել մամուլի լեզվի յուրահատկությունների հետագա ուսումնասիրությունների համար, նպաստել քաղաքական և տնտեսական թեմաներով հրապարակումների լեզվաճանաչողական վերլուծությունների իրականացմանը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները պայմանավորել են աշխատանքի **կառուցվածքը**. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք համապատասխանաբար բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված գրականության, բառարանների և էլեկտրոնային լրատվամիջոցների ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են աշխատանքի նպատակներն ու մեթոդները, թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական արժեքը:

Առաջին գլուխը, որը վերնագրված է «**Փոխաբերության ճանաչողական հայեցակերպը**», բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում («**Փոխաբերությունը՝ որպես ճանաչողական լեզվաբանության միավոր**») դիտարկվում են *փոխաբերություն* եզրի վերաբերյալ տարբեր լեզվաբանների տեսակետները և տեսական դրույթները: Մանրակրկիտ քննության են առնվում փոխաբերության ավանդական և ճանաչողական մոտեցումները, ընդգծվում դրանցում առկա

տարբերությունները: Որոշարկվում են ճանաչողական փոխաբերության հիմնական բաղադրիչները և դրանց փոխկապակցվածությունը:

Երկրորդ ենթագլխում («**Փոխաբերությունը տարբեր տեսությունների դիտանկյունից**») ներկայացվում են փոխաբերության տարբեր դասակարգումները, համակողմանի վերլուծության են ենթարկվում, մասնավորապես, ճանաչողաբանների կողմից առաջարկվող տեսակետները և հիմնադրույթները՝ վեր հանելով այդ տեսությունների միջև առկա նմանություններն ու տարբերությունները:

Երրորդ ենթագլխում («**Պատկեր-սխեմաների դերը ճանաչողական փոխաբերության ուսումնասիրության մեջ**») մանրագնին ուսումնասիրվում են պատկեր-սխեմաները, կարևորվում է նրանց առանցքային դերը փոխաբերության ճանաչողական գործընթացում, ներկայացվում են պատկեր-սխեմաների հիմնական առանձնահատկությունները և տեսակները:

Չորրորդ ենթագլխում («**Կենդանուններով փոխաբերությունները մշակույթի համատեքստում**») քննվում է մշակույթի ուրույն դերը փոխաբերությունների ձևավորման գործընթացում, ուսումնասիրվում են փոխաբերությունների ընդհանրականության և տարբերակայնության հիմնական պատճառները, ներկայացվում են կենդանուններով փոխաբերությունների ձևավորման հնարավոր աղբյուրները (մշակութային կարծրատիպեր, աշխարհագրական առանձնահատկություններ, կենդանիների էթնոկենսաբանական դասակարգում և այլն):

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը վերնագրված է «**Կենդանուններով փոխաբերական կաղապարների առանձնահատկությունները անգլաամերիկյան քաղաքական խոսույթում**», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլուխը («**Կենդանուններով փոխաբերական կաղապարների առկայացումը քաղաքական խոսույթում**») նվիրված է կենդանուններով փոխաբերությունների ուսումնասիրությանը լրագրային քաղաքական խոսույթում: Ընդգծվում է փոխաբերության դերը քաղաքական խոսույթում՝ որպես հասարակական և քաղաքական իրականության ձևավորման կարևորագույն գործոն: Մանրամասն քննության են ենթարկվում քաղաքականությունը բնութագրող փոխաբերական կաղապարները, որոնք առաջարկվել են տարբեր լեզվաբանների կողմից: Սույն ատենախոսության մեջ առավել խորը, լիարժեքորեն ուսումնասիրվում է ՔԱՐԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐԸ Է փոխաբերական կաղապարը և նրանից ածանցվող ենթակաղապարները, վեր են հանվում այս փոխաբերական կաղապարի ճանաչողական արտապատկերման հիմքում ընկած փոխաբերական արտահայտություններն ու պատկեր-սխեմաները:

Երկրորդ ենթագլխում («**Կենդանուններով փոխաբերական կաղապարները՝ որպես ճանաչողական քաղաքական**») նվիրված է փոխաբերական կաղապարների դերին ճանաչողական քաղաքական խոսույթում:

իրադարձությունների արտահայտման միջոց») մանրագնին քննության են առնվում **ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԻՐԵԱԿ Է և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՍ/ԶԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ** Է փոխաբերական ենթակաղապարները:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԻՐԵԱԿ Է փոխաբերական ենթակաղապարի միջոցով ընտրապայքարը զուգորդվում է ձիարշավի հետ (**horse racing**), որի անմիջական մասնակիցները (**workhorse, show horse, dark horse, stalking horse**), այս դեպքում, քաղաքական թեկնածուները և կուսակցությունները, առաջ են շարժվում մրցավազքի ուղիով (**run for the office, be ahead, be behind**) և հաղթահարելով մի շարք խոչընդոտներ (**run neck-and-neck, outside track, too close to call**)՝ ամեն գնով փորձում են հասնել իրենց նպատակին՝ հաղթանակին (**frontrunner, political insider**): Այս ենթակաղապարում ներառված փոխաբերական արտահայտությունների հիմքում ընկած են տարբեր պատկեր-սխեմաներ, ինչպես օրինակ, **տարածություն** (frontrunner, runner-up, ahead-behind), **շարժում** (run for office), **համախմբվածություն** (joint ticket), **պարունակություն** (political insider, political outsider), որոնք օգնում են հասկանալ «ընտրություն» և «ձիարշավ» ճանաչողական տիրույթների արտապատկերման բարդ գործընթացը: Հետաքրքրական է, որ հայ մամուլում տեղ գտած քաղաքական հոդվածներում ընտրապայքարը հիմնականում ընկալվում է որպես **ցլամարտ, առնետավազք** կամ էլ **շախմատի խաղ՝ սևերի և սպիտակների տարանջատում**:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՍ/ԶԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ Է ճանաչողական փոխաբերությունը կազմող լեզվական արտահայտությունների վերլուծության արդյունքում եզրահանգում ենք, որ քաղաքական գործունեությունը, մասնավորապես ընտրությունները, շատ հաճախ մարդկանց գիտակցության մեջ զուգորդվում են որսի և ձկնորսության հետ, որտեղ որսորդներն ու ձկնորսները քաղաքական գործիչներն են, իսկ նրանց որսը՝ մարդիկ, հանրությունը, քաղաքական շահը: Քաղաքական գործչի համար քաղաքական դաշտը արահետ է, որով առաջ շարժվելով՝ նա հասնում է իր նպատակին: Քաղաքական արահետում, նախքան նպատակակետին հասնելը, նրանք նպատակաուղղված տարբեր քայլեր են ձեռնարկում (**lay a trap, set a trap, hunt for votes, troll for votes**), կիրառում են տարբեր գործիքներ և միջոցներ (**trap, lure, bait, chum**), հանդիպում են տարբեր խոչընդոտների (**in the crosshairs, fall in trap, caught up**), որոնք պիտի հաղթահարեին՝ ցանկալի նպատակին հասնելու համար (այս դեպքում, հաղթանակ ընտրություններում):

Զուգահեռներ անցկացնելով հայ մամուլի հետ՝ կարող ենք նշել, որ այս ենթակաղապարն առկա է նաև մեր լեզվամտածողության մեջ. («ձայներ որսալ», «նոր ընտրագանգված որսալ», «ծուղակն ընկներ», «թակարդը գցել», «թակարդ լարել», «խայծ նետել», «խայծը կուլ տալ»): Հետաքրքրական է, որ հայ մամուլում ընտրությունների նախաշեմին ձայներ հավաքելու գործընթացը

նկարագրվում է նաև «մարդաորս» փոխաբերությամբ, որը բացակայում է անգլաամերիկյան մամուլում:

Երրորդ ենթազվխում («Քաղաքականության ներկայացուցիչների ու նրանց վարքագծային դրսևորումների բնորոշումը կենդանուններով փոխաբերական կաղապարների միջոցով») բազմակողմանի վերլուծության են ենթարկվում ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՄՔԵՐ ԵՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՔԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ Է փոխաբերական ենթակաղապարները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ ենթակաղապարում տեղ գտած փոխաբերական արտահայտությունները ներկայացվում են ըստ դրական և բացասական հատկանիշների, որտեղ բացասականը (62%) գերակշռում է դրականին (38%): Հետաքրքրական է, որ երբեմն միևնույն համատեքստում նույն քաղաքական գործչի հզորությունն ու թուլությունը միաժամանակ ընդգծելու նպատակով օգտագործվում են հականշային զույգեր, ինչպես օրինակ՝ **topdog-underdog, watchdog-lapdog, in like a lion, out like a lamb** փոխաբերական արտահայտությունները: Նմանօրինակ փոխաբերական զույգերի կիրառությունը միևնույն համատեքստում ավելի արտահայտիչ է դարձնում տվյալ քաղաքական գործչի կերպարը:

Հետաքրքրական է, որ հոգատար քաղաքական գործիչները հիմնականում նկարագրվում են **mama grizzly** (մայր արջ) և **the tiger woman, tigress** (կին-վագր, վագրուհի) փոխաբերական արտահայտությունների միջոցով, որոնցում նկատելի են գենդերային առանձնահատկություններ, քանի որ երկու փոխաբերական արտահայտություններն էլ բնութագրում են կին-քաղաքական գործիչներին և իրենց կազմության մեջ անգամ առկա են «մայր» և «կին» բառերը, որոնք ընդգծում են մայրական, պաշտպանողական բնագիրը: Հայ իրականության մեջ կին-քաղաքական գործչին համեմատում են «էգ առյուծի» հետ, որը պատրաստ է իր թիմակիցներին պաշտպանել ամեն հարձակումից:

Առանձնակի ուշադրության է արժանի այն փաստը, որ հնազանդությունը, լինելով դրական հատկանիշ, բացասաբար է ընկալվում քաղաքական խոսույթում: Հպատակության հատկանիշը անգլաամերիկյան և հայ մամուլում հիմնականում ներկայացվում է «շուն» կենդանու միջոցով (**puppy, poodle, lapdog, bulldog, attack dog, չոբանի շուն, հավատարիմ շուն**), որի պատճառը, գուցե, այս կենդանու նվիրվածությունն ու հավատարմությունն է իր տիրոջ հանդեպ:

Հատկանշական է, որ հայ մամուլում ընդգծվում է քաղաքական գործիչների փոփոխական կերպարը, և նրանց առավել հաճախ համեմատում են քամելեոնի հետ՝ մատնանշելով քաղաքական ասպարեզում նրանց կուսակցական պատկանելիության, ինչպես նաև քաղաքական հայացքների հաճախակի փոփոխությունները:

Եթե քաղաքական գործիչները համեմատվում են տարբեր կենդանիների հետ, ապա քաղաքական խմբավորումները զուգորդվում են կենդանական տարբեր խմբերի հետ: Քաղաքական խմբավորումները լրագրային հոդվածներում մեծամասամբ համեմատվում են գայլերի, շների ոհմակի (**a pack of hounds, a pack of wolves**), առյուծների պրայդի (**a pride of lions**), ոչխարների հոտի (**a flock of sheep**), խոշոր եղջերավոր կենդանիների նախիրի (**a herd of cattle**) հետ: Երբեմն, այս կենդանական խմբերին բնորոշ վարքագիծը նույնպես զուգորդվում է այս կամ այն քաղաքական կուսակցության գործողությունների հետ, ինչպես օրինակ, ձիերի երամակի նման խուճապահար փախչել (**to stampede**), թռչունների երամի նման ամբոխվել (**to flock**), մեղունների պարսի նման շարժվել (**to swarm**) և այլն:

Իշխող կուսակցություններն արտապատկերվում են որպես գիշատիչների ոհմակներ (**Trump pride, Republicans as a pride of lions, Republican Elephant, Republican pack, a pack of hounds**), իսկ թույլ քաղաքական խմբավորումները՝ որպես նախիր, հոտ (**liberal flock, a herd of cattle**): Սա պայմանավորված է նրանով, որ ոհմակներով ապրող կենդանիները ավելի վտանգավոր են, քան նախիրներով ապրող կենդանիները, որոնց ավելի հեշտ է կառավարել և հպատակեցնել: Վերլուծությունը փաստում է, որ հայ մամուլից քաղված օրինակներում քաղաքական կուսակցությունների նկատմամբ բացասական վերաբերմունքն ավելի սուր է արտահայտված, քան անգլաամերիկյան մամուլում:


ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՔ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ Է ԵՆՅԱԿԱՊԱԿԱՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԸ փաստում է, որ անգլաամերիկյան քաղաքական լրագրային խոսույթում հիմնականում առավել ցայտուն արտահայտված է ագրեսիվ և խուսափողական վարքագիծը: Նման վարքագիծը բնութագրվում է կենդանական տարբեր շարժումների (**to attack, to pounce, to bite, bury/stick one's head in the sand, to wriggle out, to squirm, to duck**) ու տարբեր ուժգնության ձայների (**to bark, to snarl, to growl, to hiss, to crow**) միջոցով: Ուսումնասիրված օրինակների (թվով 17 փոխաբերական արտահայտություն) 71%-ը բնութագրում է քաղաքական ագրեսիվ, իսկ 29%-ը՝ խուսափողական վարքագիծը: Եթե հայ մամուլում ագրեսիան արտահայտվում է «հարձակվել» բառի ընդհանուր իմաստով, ապա անգլաամերիկյան քաղաքական խոսույթում՝ կոնկրետ կենդանիներին բնորոշ վարքագծով:

Ընտրված լրագրային լեզվանյութի քննությունը թույլ է տալիս արձանագրել, որ **ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է փոխաբերությունը** բարդ ճանաչողական փոխաբերություն է՝ հագեցած հարուստ պատկերախեմատիկ կառույցներով, բարձր հուզարտահայտչականությամբ, գնահատողականությամբ ու զգացմունքայնությամբ: Կենդանուներով փոխաբերությունների կիրառման նպատակը հիմնականում բացասական գնահատական ձևավորելն է և

քաղաքականության մեջ հարաբերությունների ազդեցիկ բնույթն արտահայտելը: Այս փոխաբերական կաղապարը ներկայացված է 96 փոխաբերական արտահայտությամբ, որոնց միջև տոկոսային հարաբերությունները ներկայացված են գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է փոխաբերության ենթակաղապարների տոկոսային բաշխվածությունը



Լեզվանյութի վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել, որ քաղաքական արդյունավետ գործունեության և քաղաքական մեծածավալ ծրագրերի ու որոշումների իրագործման համար խիստ կարևոր են համապատասխան տնտեսական ռեսուրսները: Առանձնակի կարևորվում է տնտեսության դերը քաղաքականության մեջ, առանց որի բոլոր քաղաքական որոշումներն ու գործընթացները կգրոյանան և կկորցնեն իրենց իմաստը: Հիմնվելով վերոնշյալ քաղաքականություն-տնտեսություն սերտ փոխկապակցվածության վրա՝ կարևորում ենք ուսումնասիրվող փոխաբերությունների լեզվաճանաչողական վերլուծությունը նաև տնտեսական խոսույթում, որը հնարավորություն կտա վերհանել երկրի տնտեսաքաղաքական իրավիճակի իրական պատկերը և հասարակական կյանքի այս երկու ոլորտների տրամաբանական փոխկապակցվածությունը:

Երրորդ գլուխը, որը վերնագրված է **«Կենդանուններով փոխաբերական կաղապարների առանձնահատկությունները անգլամերիկյան տնտեսական խոսույթում»**, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլուխը (**««Տնտեսություն» հասկացության լեզվականացումը կենդանուններով փոխաբերական կաղապարների միջոցով»**) նվիրված է կենդանուններով փոխաբերությունների ուսումնասիրությանը տնտեսական լրագրային խոսույթում: Ընդգծվում է տնտեսության և քաղաքականության սերտ փոխկապակցվածությունը,

մանրամասն քննության են ենթարկվում «տնտեսություն» թիրախ տիրույթը առկայացնող հնարավոր աղբյուր տիրույթները, ինչպես նաև տարբեր տեսաբանների կողմից առաջարկված տնտեսությունը բնութագրող փոխաբերական կաղապարները:

Երկրորդ ենթազվխում («**Շուկա**» և **«շուկայի սուբյեկտներ» հասկացությունների լեզվական առկայացումը կենդանուններով փոխաբերական կաղապարների միջոցով**») մանրակրկիտ վերլուծության են ենթարկվում ՇՈՒԿԱՆ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է, ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ փոխաբերական ենթակաղապարները:

ՇՈՒԿԱՆ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է փոխաբերական ենթակաղապարի միջոցով շուկաները համեմատվում են տարբեր տեսակի կենդանիների հետ (**bear market, bull market, buffalo market, bunny market, bulldog market**): Ամենատարածվածը «ցլային» և «արջային» շուկաներն են և դրանցից ածանցվող փոխաբերական բառակապակցությունները (**bear raid, bear trap, bear run, bear territory, bull trap, bull run, bull spread**): Ֆոնդային շուկան մեծամասամբ ձեռք է բերում այս երկու կենդանիներին բնորոշ հատկանիշները՝ ցլի ակտիվությունն ու արջի քնկոտությունը և ընդգծվում է ֆոնդային շուկայի «վայրի» էությունը: Հուզահեռներ անցկացնելով հայ մամուլում առկա տնտեսական հոդվածների հետ՝ հարկ է նշել, որ ամերիկյան տնտեսական շուկային բնորոշ «ցլային» վերելքների և «արջային» վայրէջքների մասին շուկայական տնտեսագիտության եզրերը հանդիպում են միայն որպես պատճենված եզրեր, չակերտների մեջ բառացի թարգմանություններ, որոնք թիրախ լեզվամշակույթի համար խորթ փոխաբերական արտահայտություններ են:

ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ փոխաբերական կաղապարի միջոցով շուկայի սուբյեկտների՝ ներդրողների, գործարարների, անձնային հատկանիշներն ու վարքագիծը արտապատկերվում է կենդանական հատկանիշների ու վարքագծի միջոցով: Ներդրողների դրական և բացասական կերպարները մամուլում հիմնականում ներկայացվում են հետևյալ զույգերի միջոցով՝ **ցուլ-արջ, սուրիկատ-ջայլամ, սկյուռ-ջայլամ, ճագար-կրիա, բազե-աղավնի**: Ուսումնասիրված թվով 17 փոխաբերական արտահայտություններից 11-ը (69%) բացասականորեն է նկարագրում շուկայի սուբյեկտներին, իսկ 6-ը (31%)՝ դրականորեն:

Հայ մամուլում բացակայում է ՆԵՐԴՐՈՂՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ փոխաբերական կաղապարը, քանի որ ներդրումային քաղաքականությունը դեռևս բավականաչափ զարգացած չէ Հայաստանում: Փոխարենը՝ առկա է ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ ենթակաղապարը (**գիշատիչներ, շնածկներ, մանր ձկներ՝ կիլկիներ**): Հայ մամուլում նման խիստ բացասականությունը

կարող է պայմանավորված լինել Հայաստանում տիրող մենաշնորհային կարգավիճակով:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՅ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ փոխաբերական ենթակաղապարի միջոցով վեր են հանվում և հակադրվում այս կամ այն ընկերության թույլ և ուժեղ կողմերը: Այսօր համաշխարհային շուկայում գործում են մի շարք ընկերություններ, որոնք, որպես իրենց ընկերության լոգո, ընտրել են հենց կենդանիների անունները, ինչպես օրինակ, **FireFox** (աղվեսի արագությունն ու ճարակությունը), **Puma** (վագրի արագությունն ու ագրեսիվությունը), **Twitter** (թռչնի ծվլոցը), **RedBull** (կատաղի ցուլի էներգիան) և այլն: Հայ մամուլում առկա տնտեսական հոդվածներում ընկերությունների հզորությունը արտապատկերվում է միայն գիշատչի կերպարով, ի տարբերություն անգլաամերիկյան մամուլի, որտեղ հզոր ընկերությունները բացի գիշատիչներից, ներկայացվում են որպես վիթեր և գորիլաներ (**gazelle, 800-pound gorilla**): Հայկական տնտեսական դաշտին բնորոշ է խիստ ծայրահեղականությունը՝ կա՛մ գիշատիչներ, կա՛մ ոչխարներ:

Երրորդ ենթագլխում («**Շուկայական երևույթների ընկալումը կենդանուններով փոխաբերական կաղապարների միջոցով**») մանրագնին ուսումնասիրվում և վերլուծվում են ՇՈՒԿԱԹ ՏՍԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԵՆ և ԳՆԱՃԸ ԿԵՆԴԱՆԻ Ե փոխաբերական ենթակաղապարները:

Շուկայական տատանումները զուգորդվում են տարբեր կենդանական շարժումների ու ձայների հետ՝ այս երևույթները հանրության լայն շերտերի համար առավել ընկալելի դարձնելու նպատակով: Շուկայական տատանումները կարող են ունենալ տարբեր աշխարհաքաղաքական և տնտեսաքաղաքական դրդապատճառներ: Շուկայական տատանումները բնութագրող կենդանական շարժումները կարելի է բաժանել երկու խմբի՝ դեպի վեր ուղղվածություն (**to soar, to jump, to leap, to climb, to swing, to crawl higher**) և դեպի վար ուղղվածություն (**to dive, to sink, to slide, to plunge**): Հատկանշական է, որ անգլաամերիկյան մամուլում հիմնականում հանդիպում են «շուկա, բորսա» եզրերը, որոնց շարժերը համեմատվում են կենդանիների կատարած գործողությունների հետ, մինչդեռ հայ մամուլում «շուկա, բորսա» եզրերի փոխարեն օգտագործվում է «գին» եզրը, քանի որ հայկական իրողության մեջ չկան ֆոնդային բորսաներ:


ԳՆԱՃԸ ԿԵՆԴԱՆԻ Ե փոխաբերական ենթակաղապարից ածանցվում են մի շարք այլ կաղապարներ, որոնք տեսականիշ են ԳՆԱՃԸ ԿԵՆԴԱՆԻ Ե փոխաբերության նկատմամբ՝ ԳՆԱՃԸ ՎԱՅՐԻ ԳԱՋԱՆ Ե (the beast of inflation, feed the beast), ԳՆԱՃԸ ՎԻՇԱՊ Ե (slay the inflation dragon, inflation 'Dragon'), ԳՆԱՃՆ ԱՌՅՈՒՄ Ե (roaring inflation), ԳՆԱՃԸ ՁԻ Ե (galloping inflation, lag behind, run ahead), ԳՆԱՃԸ ՍՈՐՈՒՆ Ե (creeping inflation), ԳՆԱՃԸ ԹՈՂՉՈՒՆ Ե (soaring inflation): Այս փոխաբերական ենթակաղապարը հարուստ է նաև պատկեր-սխեմաներով (ՎԵՐ-ՎԱՐ, ՇԱՐԺՈՒՄ, ՊԱՐՈՒՆԱԿԻՉ, ԱՌԱՋ-ՇԵՏ), որոնցից, թերևս,

առավել հատկանշական է ՎԵՐ-ՎԱՐ պատկեր-սխեման, քանի որ վերջինս «գնաճ» տնտեսական երևույթի փոխաբերական արտապատկերման գործընթացում գրեթե միշտ դրսևորում է հակառակ պատկեր:

Հայ մամուլում նույնպես առկա է ԳՆԱՃԸ ԿԵՆԴԱՆԻ Է փոխաբերական կաղապարը, սակայն այս կաղապարից ածանցվող արտահայտությունները սակավաթիվ են: Դրանց մի մասը բառացի են թարգմանվել (**քառատրոփ գնաճ**), մի մասը տարբերվում են պատկերավորության աստիճանով (**զսպել գնաճը**), մինչդեռ որոշ դեպքերում զուգադրվող մշակույթներում միևնույն տնտեսական երևույթը առկայացվում է տարբեր կաղապարների միջոցով, օրինակ՝ հայ մամուլում առկա է ԳՆԱՃԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Է փոխաբերական կաղապարը (**գնաճը մեղմել**), մինչդեռ անգլաամերիկյան մամուլում՝ ԳՆԱՃԸ ԿԵՆԴԱՆԻ Է (**whip inflation – բառացի՝ «մտրակել գնաճը»**) կաղապարը:

Մանրակրկիտ վերլուծության ենթարկելով ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է փոխաբերական կաղապարը՝ հարկ է նշել, որ այն առանձնանում է փոխաբերական արտահայտությունների բազմազանությամբ (շուրջ 78 փոխաբերական արտահայտություն): Գծապատկեր 2-ում արտացոլված է փոխաբերական ենթակաղապարները կազմող արտահայտությունների տոկոսային հարաբերակցությունը, որտեղ առավել մեծ տոկոս է կազմում ԳՆԱՃԸ ԿԵՆԴԱՆԻ Է փոխաբերական կաղապարը (27 փոխաբերական արտահայտություն), ինչը պայմանավորված է գնաճի՝ տնտեսության վրա ունեցած բացասական ազդեցությամբ:

Գծապատկեր 2
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է փոխաբերության ենթակաղապարների տոկոսային բաշխվածությունը



Հատկանշական է, որ նույն կենդանու անվան իմաստային հարանշանակությունները երբեմն համընկնում են, իսկ երբեմն էլ՝ տարբերվում ուսումնասիրվող երկու խոսույթներում: Օրինակ՝

- ❖ «կրիա» կենդանվան դեպքում քաղաքական խոսույթում ընդգծվում է նրա դանդաղկոտությունը (**Theresa May tortoise**), իսկ տնտեսական խոսույթում՝ խոհեմությունը (**tortoise investor**),
- ❖ «արջ» կենդանվան դեպքում քաղաքական խոսույթում ընդգծվում է նրա ագրեսիվությունը, գիշատիչ լինելը (**Russian bear**), իսկ տնտեսական խոսույթում՝ «արջային շուկա» փոխաբերական արտահայտությամբ՝ նրա ալարկոտությունը, քնկոտությունը (**bear market**),
- ❖ «կատու» կենդանին քաղաքական խոսույթում արտապատկերում է կանանց կռիվը, բանավեճը (**catfight**), իսկ տնտեսական խոսույթում՝ հարուստ ներդրողներին ու ղեկավարներին (**fat cat**): Ուշագրավ է, որ «գեթ կատու» փոխաբերական արտահայտությունը օգտագործվում է միաժամանակ և՛ քաղաքական, և՛ տնտեսական լրագրային հոդվածներում:

Սակայն մի շարք փոխաբերությունների դեպքում, ինչպես օրինակ, ոչխար, ջայլամ, հավ, նկատվում են կիրառության ընդհանուր միտումներ: Վերլուծությունը փաստում է, որ քաղաքականությունն ու տնտեսությունը ոչ թե մեկուսացված, այլ համակողմանի փոխներթափանցող և փոխգործուն յուրտներ են:

Եզրակացության մեջ ամփոփվում են ուսումնասիրության հիմնական արդյունքները.

1. ՔԱՐԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է ՃԱՆԱՅՈՂԱԿԱՆ փոխաբերության արտապատկերման համակարգը հիմնված է տարբեր պատկեր-սխեմաների վրա, որոնց վերլուծությունը ճանաչողական-խոսույթային հայեցակերպի լույսի ներքո հնարավորություն է տալիս բացահայտել և վերհանել «քաղաքականություն» թիրախ տիրույթի խորքային կառուցվածքը և էական հատկանիշները: Այդ պատկեր սխեմաներն են՝ ՍԿԶԵԱԿԵՏ-ՈՒՂԻ-ՆՊԱՏԱԿԱԿԵՏ, ԳՈՐԾԵՆԹԱՅ, ՈՒԺ, ՇԱՐԺՈՒՄ, ՈՒՂԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ԿԵՐ-ՎԱՐ, ԱՌԱՋ-ՇԵՏ, ՀԱՏԿԱՆԻՇ, ՊԱՐՈՒՆԱԿԻՉ, ՄԱՍ-ԱՄԲՈՂՋ: Այս պատկեր-սխեմաները մեծամասամբ ճանաչողականորեն փոխկապակցված են, թեպետ առավել ցայտուն է ՈՒԺ-ՇԱՐԺՈՒՄ-ՈՒՂԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ-ՈՒՂԻ պատկեր-սխեմաների փոխկապակցվածությունը:

2. ՔԱՐԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է ՃԱՆԱՅՈՂԱԿԱՆ փոխաբերությունից սերող ենթակաղապարները գրեթե համընկնում են անգլաամերիկյան և հայ մամուլում, սակայն համընկնող ենթակաղապարներից բխող հավելյալ արտապատկերումները տարբերվում են մշակույթից մշակույթ: Բացառություն է կազմում միայն ԸՆԾՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՄՇԵԱԿ

Է ենթակադապարը, որի փոխարեն հայ մամուլում օգտագործվում է ԸՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՑԼԱՄԱՐՏ Է, ԸՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՏԱՎԱԶՔ Է:

3. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՂԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է ճանաչողական փոխաբերության արտապատկերման համակարգը հարուստ է տարբեր պատկեր-սխեմաներով՝ ՈՂՂԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ՎԵՐ-ՎԱՐ, ՇԱՐԺՈՒՄ, ՈՂՂԻ, ՊԱՐՈՒՆԱԿԻՉ, որոնք մեծամասամբ ճանաչողականորեն փոխկապակցված են, թեպետ առավել կիրառական են ՎԵՐ-ՎԱՐ և ՇԱՐԺՈՒՄ պատկեր-սխեմաները:

4. Զուգադրվող լեզվամշակույթներում ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՂԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է փոխաբերության հիմնական ենթակադապարները գրեթե համընկնում են, սակայն դրանցից բխող հավելյալ արտապատկերումները, ինչպես քաղաքական խոսույթի դեպքում, տարբերվում են՝ դրսևորելով որոշակի լեզվամշակույթային առանձնահատկություններ: Ի տարբերություն քաղաքական խոսույթի, հայերեն տնտեսական խոսույթում ավելի շատ են բառացի թարգմանությունները, որոնք խորթ են հայ լեզվամշակույթի համար, իսկ երբեմն էլ միևնույն տնտեսական երևույթը առկայացվում է տարբեր կադապարների միջոցով: Ավելին, զուգադրվող լեզվամշակույթներում տնտեսական բառապաշարի զարգացման տեմպը նույնպես շատ տարբեր է: Անգլերենը, լինելով միջազգային բիզնեսի լեզու, ավելի զգայուն է փոփոխությունների նկատմամբ: Տնտեսագիտական ոլորտի բառապաշարում նկատելի է նոր փոխաբերությունների զարգացման շարունակական գործընթաց, որն առաջինն արտացոլվում է հենց անգլերենում:

5. Կատարված վերլուծությունը վեր է հանում քաղաքական և տնտեսական խոսույթների միջև մի շարք նմանություններ և տարբերություններ՝

ա) ՔԱՆԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԿԵՂԱՆԻՆԵՐ ԵՆ և ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԿԵՂԱՆԻՆԵՐ ԵՆ ենթակադապարների արտապատկերման համակարգը և՛ ճանաչողական, և՛ պատկերասխեմատիկ կառուցվածքի տեսանկյունից նման են միմյանց, քանի որ թիրախ տիրույթը մարդիկ են (քաղաքական գործիչները և շուկայի մասնակիցները): Այս փոխաբերական կադապարների և ՄԱՐԻԿ ԿԵՂԱՆԻՆԵՐ ԵՆ փոխաբերության միջև առկա են սեռատեսականիշային հարաբերություններ:

բ) ՔԱՆԱՔԱԿԱՆ ՎԱՐՔԸ ԿԵՂԱՆԱԿԱՆ Է և ՇՈՒԿԱՅԻ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԵՂԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԵՆ ենթակադապարները նույնպես ունեն որոշակի ընդհանրություններ, քանի որ այս երկու ենթակադապարներում փոխաբերաբար կիրառվում է կենդանիներին բնորոշ վարքագիծը, շարժումները, հետևաբար, ի տարբերություն այլ ուսումնասիրված ենթակադապարների, առավել հաճախադեպ օգտագործվում են գործողություն ցույց տվող միավորները՝ բայերը (քաղաքական խոսույթում ուսումնասիրված փոխաբերական արտահայտությունների 38.5%-ը բայեր են, իսկ տնտեսական խոսույթում՝ 48%-ը): Քաղաքական խոսույթում մեծամասամբ նկատվում է

վարքային դրսևորման երկու հիմնական տեսակ՝ ազդեցիկ (71%) և խուսափողական (29%), իսկ տնտեսական խոսույթում շուկայի տատանումները մեծամասամբ հատկորոշվում են երկու ուղղվածությամբ՝ վեր (60%) և վար (40%):

գ) նույն կենդանու անվան իմաստային հարանշանակությունները երբեմն համընկնում են (հավ, ոչխար, ջալամ), իսկ երբեմն էլ՝ տարբերվում (կրիա, արջ) ուսումնասիրվող խոսույթներում: Հատկանշական է, որ փոխաբերական արտահայտությունները տարբերվում են ոչ միայն խոսույթից խոսույթ, այլ կարող են տարբեր դրսևորումներ ունենալ միևնույն խոսույթում:

դ) Քաղաքական խոսույթին առավել բնորոշ են մարած փոխաբերությունները, որոնց իմաստային երկպալանայնությունը ժամանակի ընթացքում թուլացել է և կորցրել ինքնատիպությունը, մինչդեռ տնտեսական խոսույթը հատկանշվում է վառ արտահայտչականությամբ աչքի ընկնող հեղինակային փոխաբերություններով:

ե) Տնտեսական խոսույթն աչքի է ընկնում կենդանունների տեսակային բազմազանությամբ և հեղինակային փոխաբերությունների հագեցվածությամբ: Ուսումնասիրված թվով 44 կենդանուններից 12-ը հանդիպում է միայն քաղաքական խոսույթում (27.3%), 19-ը՝ տնտեսական խոսույթում (43.2%), իսկ 13-ը՝ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական խոսույթներում (29.5%):

զ) Կենդանունները կարևոր աղբյուր տիրույթ են քաղաքական և տնտեսական բարդ երևույթներն ու իրողությունները ընկալելու հարցում: Այս փոխաբերություններում ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտացոլվում և բացահայտվում են տվյալ մշակույթի պատմությունը, սովորույթներն ու արժեքները: Ուստի, կենդանուններով փոխաբերություններն ունեն վառ արտահայտված գնահատողական ներուժ: Քննված օրինակներում գերակշռում է բացասական գնահատողականությունը, քանի որ մարդու վարքագծի ծայրահեղ դրսևորումները, ինքնակառավարման կորուստը ընկալվում է հենց կենդանիների վարքի միջոցով: Քաղաքական խոսույթում ուսումնասիրված թվով 96 փոխաբերական արտահայտություններից 73-ը՝ գրեթե 76%-ը, բացասական հարանշանակություն ունի, իսկ տնտեսական խոսույթում՝ ուսումնասիրված թվով 78 փոխաբերական արտահայտություններից 48-ը՝ գրեթե 61.5%-ը:

Այսպիսով, քաղաքական և տնտեսական խոսույթներում կենդանուններով փոխաբերությունները հիմնականում իրականացնում են հուզական, ճանաչողական, համոզման և մտաշահարկային գործառույթներ: Այս գործառույթները փոխշաղկապված են, քանի որ քաղաքական գործիչները, ներդրողները, տնտեսական ընկերությունները, հողավաճառքիները չեզոք արտահայտությունները մեծամասամբ փոխարինում են զգացմունքային և գնահատողական արտահայտություններով, այս դեպքում, կենդանուններով

փոխաբերություններով՝ փորձելով իրենց քարոզչությամբ ազդել լսարանի գիտակցության վրա և կոնկրետ փոխաբերության ընտրության միջոցով շահարկել իրենց լսարանի գիտակցությունը: Փոխաբերությունը, լինելով քաղաքական և տնտեսական իրականության ձևավորման կարևորագույն ճանաչողական գործիք, նպաստում է քաղաքական և տնտեսական իրողությունների ճանաչողական ընկալմանը:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Image Mapping Peculiarities in English Animal Metaphors // *Բանբեր*, 1 (19), Երևան, ԵՊԼՀ, «Լինգվա» հրատ., 2012, էջ 34-41 (համահեղինակ՝ Ք. Գրիգորյան):
2. Cognitive Approach to “People are Animals” Primary Metaphor // *Բանբեր*, 1 (21), Երևան, ԵՊԼՀ, «Լինգվա» հրատ., 2012, էջ 167-173 (համահեղինակ՝ Ք. Գրիգորյան):
3. «Շուն» հասկացույթի ճանաչողական և կերպարասխեմատիկ արտապատկերումը անգլոամերիկյան քաղաքական խոսույթում // *Բանբեր*, 1 (32), Երևան, ԵՊԼՀ, «Լինգվա» հրատ., 2015, էջ 220-229:
4. «Ընտրությունը ձիարշավ է» ճանաչողական փոխաբերության հասկացական կաղապարումը անգլաամերիկյան քաղաքական խոսույթում // *Բանբեր*, 1(34), Երևան, ԵՊԼՀ, «Լինգվա» հրատ., 2015, էջ 206–220:
5. «Մարդիկ կենդանիներ են» և «Կենդանիները մարդիկ են» փոխաբերությունների ճանաչողական կաղապարումը // *Բանբեր*, 1 (36), Երևան, ԵՊԼՀ, «Լինգվա» հրատ., 2016, էջ 236-251:
6. «Արջ» կենդանունով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունները անգլաամերիկյան քաղաքական խոսույթում // *Բանբեր*, 1 (36), Երևան, ԵՊԼՀ, «Լինգվա» հրատ., 2016, էջ 252-261:
7. «Բիզնեսը ձիարշավ է» ճանաչողական փոխաբերության արտապատկերումը անգլաամերիկյան տնտեսագիտական խոսույթում // *Բանբեր*, 1 (42), Երևան, ԵՊԼՀ, «Լինգվա» հրատ., 2017, էջ 357-365 (համահեղինակ՝ Ք. Գրիգորյան):
8. Կենդանուններով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունները տնտեսական խոսույթում // «Ռուսագիտության արդի հիմնախնդիրները» գիտական հանդես, 9(13), Երևան, ՄՊՀ հրատարակչություն, 2022թ., էջ 43-56:

Ani Sargis Harutyunyan

Linguo-Cognitive Characteristics of Animal Metaphors in Anglo-American Media (with special reference to Armenian)

Summary

The present dissertation aspires to provide a systematized analysis on both the essence and structure of animal metaphors employed in political and economic media discourses in comparison with those in the Armenian language.

The topicality of the research is determined by the fact that in the modern world not only do animal metaphors prevail among other types of metaphors in many languages, but also provide an exceptional basis for the conceptualization of political and economic reality. The study sheds new light on the uses of cognitive metaphors which account for metaphorical expressions in political and economic media discourses. Having the cognitive ability both to make and understand metaphors, humans cognitively model and represent political and economic world by means of animal metaphors.

The object of the research is animal metaphors used in political and economic media discourses within the scope of cognitive linguistics.

The subject matter of the research is the metaphorical models with animal names in political and economic media in comparison with those in Armenian.

The present research paper pursues the following **goals**: to examine the linguo-cognitive aspects of animal metaphors employed in political and economic media, as well as to carry out a comparative analysis of the metaphors under study in the English and Armenian languages, pointing out their similarities and differences.

To achieve the goals, the following **objectives** have been set forth:

- ❖ to study different approaches to metaphor, to provide a range of metaphor classifications as well as to emphasize the role of image-schemas in metaphorical mapping,
- ❖ to elucidate the culture-specific aspects of animal metaphors,
- ❖ to suggest the classification of animals metaphors highlighting their cognitive function and image-schematic structure,
- ❖ to assess the role of animal metaphors in the discourses under study as well as to provide some insight into the structure of their metaphorical mappings,

- ❖ to compare animal metaphors in political and economic media discourses as well as to identify their similarities and differences in comparison with those in Armenian.

The scientific novelty of the research is determined by the comprehensive study of animal metaphors as seen from linguistic and cognitive perspectives. For the first time an attempt has been made not only to draw a comparison between these two discourses with regard to one specific source domain ("animal world"), but also to compare their characteristics with those used in Armenian media taking into account their similarities and differences.

The theoretical significance of the research is validated by the fact that the conclusions drawn as outcomes of the investigation may contribute to the further development in the fields of cognitive linguistics, pragmatics, the language of journalism. The research sheds light on the principles and mechanisms of world conceptualization within the framework of cognitive metaphors, namely animal metaphors.

The practical value of the research is conditioned by the fact that the main findings of the research can be applied in the courses of semantics, lexicology, pragmatics, text linguistics, sociolinguistics, functional stylistics, as well as in writing scientific articles, bachelor's and master's theses.

The dissertation consists of an introduction, three chapters with relevant sub-chapters, a conclusion and a bibliography.

Ани Саркисовна Арутюнян

Лингвокогнитивные особенности зооморфной метафоры в англо-американских СМИ (в сопоставлении с армянским)

Резюме

Данная диссертационная работа посвящена изучению зооморфных метафор, используемых в политическом и экономическом медиа простанствах в сопоставлении с армянским.

Актуальность исследования обусловлена тем, что в современном мире зооморфные метафоры приобретают все большую популярность в политическом и экономическом дискурсах. Данная диссертационная работа нацелена на исследование использования когнитивных метафор, которые лежат не только в основе исследуемого дискурса, но и формируют метафорические выражения в политическом и экономическом медиа-дискурсах. Люди обладают когнитивной способностью создавать, понимать и моделировать зооморфные метафоры с целью когнитивного формирования и представления политического и экономического миров в стремительно меняющейся среде.

Объектом исследования являются зооморфные метафоры, используемые в политическом и экономическом медиа дискурсах в свете когнитивной лингвистики.

Предметом исследования являются лингвокогнитивные аспекты зооморфных метафор и метафорических моделей в англо-американских политическом и экономическом медиа дискурсах в сопоставлении с армянским.

Настоящая исследовательская работа преследует следующие **цели**: проанализировать лингвокогнитивные аспекты зооморфных метафор, используемых в политическом и экономическом медиа дискурсах, а также провести сравнительный анализ исследуемых метафор в английском и армянском языках, указывая на сходства и различия в их функционировании.

Реализация целей достигается путем решения следующих **задач**:

- ❖ изучить основы эмпирического понятия метафоры, рассмотреть различные классификации метафор, а также определить роль образных схем в процессе метафорического проецирования,
- ❖ рассмотреть роль культуры в процессе восприятия метафоры, а также выявить культурно-специфические аспекты зооморфных метафор,
- ❖ классифицировать метафоры, используемые в политическом и экономическом медиа дискурсах, в соответствии целевого домена

«животный мир», выявляя особенности их интерпретации, когнитивную природу и образно-схематическую структуру,

- ❖ выявить особенности метафорических отображений зооморфных метафор в политическом и экономическом медиа дискурсах, а также проанализировать их роль в изучаемых дискурсах,
- ❖ сравнить зооморфные метафорические модели, выделив их сходства и различия в политическом и экономическом дискурсах СМИ, в сопоставлении с армянским.

Научная новизна исследования определяется всесторонним изучением зооморфных метафорических моделей в рамках англоязычного экономического и политического медиа дискурсов с лингвистической и когнитивной точек зрения. В рамках данного диссертационного исследования впервые совершена попытка выявления и всестороннего анализа зооморфных метафорических моделей используемых в политическом и экономическом медиа дискурсах. Более того, была предпринята попытка не только провести сравнение между этими двумя дискурсами с точки зрения только одного исходного домена - «животный мир», но и сопоставить характеристики материала в рамках армянских СМИ с учетом сходства и различий.

Теоретическая значимость исследования подтверждается тем, что выводы, сделанные по результатам исследования, могут способствовать дальнейшему развитию в областях когнитивной лингвистики, прагматики, языка журналистики. Исследование проливает свет на принципы и механизмы концептуализации мира в рамках когнитивной метафоры, а именно зооморфных метафор.

Практическая ценность исследования обусловлена тем, что ее основные положения могут найти применение в эмпирических курсах семантики, лексикологии, прагматики, лингвистики текста, социолингвистики, функциональной стилистики, а также при написании научных статей, курсовых и дипломных работ.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и библиографии.

